

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ

Հայ նշանավոր հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ Ստեփան Ոսկանյանը (1825—1901 թթ.) մեր իրականության այն դեմքերից է, որի ինչպես կյանքը, այնպես էլ, մանավանդ, գործունեությունը լի են առ այսօր չբացահայտված «սպիտակ կետերով»: Այդ «սպիտակ կետերն» առավել մեծ քանակությամբ են հանգես գալիս, երբ խոսքը վերաբերում է նրա ինքնուրույն և թարգմանական ստեղծագործություններին: Հարցի ողջ բարդությունն այն է, որ պարբերականներում տպագրված նրա գործերի գերակշիռ մասը կամ անստորագիր են, կամ ունեն զանազան կեղծանուններ, ուստի միայն կողմնակի վկայություններն են օգնում պարզելու նրանց հեղինակային պատկանելությունը:

Ստեփան Ոսկանյանի (Ստեփան Ոսկանի) անունը առաջին անգամ երևում է մեր մամուլում 1843 թ., այսինքն այն ժամանակ, երբ նա 18 տարեկան էր և սովորում էր իր ծննդավայրի (Զմյուռնիա) Մեսրոպյան վարժարանի ավարտական դասարանում: 1843 թ. հունվարին Զմյուռնիայում հրատարակվող «Արշալույս Արարատյան» շաբաթաթերթը, Ֆրանսերենից կատարված արևմտահայերեն կոկիկ թարգմանությամբ, հրատարակում է «Կիրակի օր անգղիացի պատերազմական նավի մը մեջ» պատմվածքը, որը վերջում ունի «թարգմանեաց ի գաղղիականե Ստեփան Ոսկանյան, յաշակերտաց վարժարանիս» նըշումը: Այսպիսի ստորագրությամբ կատարվող զանազան թարգմանություններ «Արշալույս Արարատյանը» պարբերաբար հրատարակում է մեկ ամբողջ տարի, ընդհուպ մինչև 1844 թ. փետրվարը: Այս մեկ տարվա ընթացքում Ոսկանյանի կյանքում տեղի ունեցած կարևոր փոփոխությունն այն էր, որ նա արդեն ավարտել էր Մեսրոպյան վարժարանը, և նկատի ունենալով նրա քաջ ֆրանսագիտությունը, վարժարանի ղեկավարությունը պահել էր նրան դպրոցում, որպես ֆրանսերեն լեզվի օգնական ուսուցիչ: 1844 թ. փետրվարին, նկարագրելով Մեսրոպյան վարժարանի տարեկան ավարտական հանդեսը, «Արշալույս Արարատյանը» տալիս է հետևյալ, մեզ համար շատ կարևոր ծանոթությունը. «Վարձատրության հանդեսին սկիզբը սուրբ Մեսրոպյան դպրոցին երեւելի վարժապետներեն՝ պատվելի պարոն Ռուբեն Անդրեասը Փափազյան հետեյալ ճառը կարդաց (բերվում է Փափազյանի ընդարձակ ճառը—Ս. Շ.): Անկե ետքը, դպրատան ուսումնական պարոն Հայկ Ստեփանը Ոսկանյան Ի նվեր Սյունյաց ընկերությանը ոտանավոր մը կարդաց, որն որ նմանապես հրատարակելու արժան համարեցանք»:

Որևէ տարակույս չի կարող, որ հիշյալ Հայկ Ստեփան Ոսկանյանը մեզ հետաքրքրող Ստեփան Ոսկանյանն է: Բավական է հիշատակել միայն,

որ 1859 թ. Փարիզում հրատարակվող «Արևմուտք» երկշաբաթաթերթը, որն, ինչպես հայտնի է, հրատարակում էր Ստեփան Ոսկանյանը, ուներ «Արձագանգ Եվրոպայի լուսավորության» ենթավերնագիրը, իսկ վերջում՝ «Խմբագիր-տնօրեն Հ. Ս. Ոսկանյան» նշումը, որը նույն Հայկ Ստեփան Ոսկանյանի կրթ-ճատված ձևն է։ Ստեփան Ոսկանյանին այդպես, այսինքն՝ Հայկ Ստեփան Ոսկանյան ձևով էր կոչում, և այն էլ մի շարք առիթներով, Զմյուռնիայի «Արշալույս Արարատյան» շաբաթաթերթը¹։

Մինչև այս ճշգրտումից բխող կարևոր պարզաբանումներին անցնելը պարզենք մի հարց. ինչո՞վ է բացատրվում առաջին հայացքից տարօրինակ թվացող երկու անվան առկայության փաստը ինչպես Ոսկանյանի, այնպես էլ դարասկզբի արևմտահայ մեր մյուս գրական-հասարակական գործիչների մոտ։

Յուրքերը, սկսած օսմանյան կայսրության հիմնադրման ժամանակվանից ընդհուպ մինչև XX դարի սկիզբը, ազգանվան զաղափար չունեին։ Իրար դիմելու, դիմացինին խոսակցության հրավիրելու և այս կարգի այլ դեպքերում գործածվում էր միայն անունը, որը, նայած տվյալ անձնավորության դիրքին, վերջից ունենում էր «պեյ» կամ «էֆենդի» տիտղոսը։ Սրանից բացի, գերազանցապես մտավորականության շրջանում, որոշ անվան ու դիրքի հասած անձինք, իրենց իսկական անվան կողքին և դրա հետ մեկտեղ, գրում էին նաև իրենց տոհմական պատկանելությունը ցույց տվող որևէ անուն, որի հետևանքով, միաժամանակ, ստացվում էր երկու անուն։ Այսպես, օրինակ, Համդի բեյը, բանի դեռ Զմյուռնիայում անշան պաշտոնյա էր, կոչվում էր նշված ձևով։ Սակայն երբ 1842 թ. նշանակվեց Զմյուռնիայի կառավարիչ (բաղաբազուխ), անմիջապես սկսեց կոչվել Ահմեդ Համդի բեյ։ Պոլսում հրատարակվող «Սաբահ» թերթի խմբագիրը նախապես կոչվում էր Աբդուլ էֆենդի, իսկ խմբագիր դառնալուց հետո՝ Աբդուլ Կադեր էֆենդի և այլն։

Օսմանյան կայսրության հպատակ հայերն էլ, բնականաբար, պետք է ընդօրինակեին վերոհիշյալ ձևը։ Բարդությունը, սակայն, այն էր, որ հայերը համառորեն չէին հրաժարվում երկու անվան հետ մեկտեղ նաև իրենց տոհմական ազգանունը կիրառելու սովորությունից, որի հետևանքով էլ քիչ թե շատ հասարակական անուն ու դիրք ունեցող անձանց մոտ ստացվում էր երկու անուն և մեկ ազգանուն։ Օրինակ. սկզբնական շրջանում Անդրեաս Փափազյան ձևով հայտնի՝ Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարան հրավիրված երիտասարդը, լեզուների դասեր և վարժարանի ընդհանուր վերատեսչի բարդ պաշտոնը ստանձնելուն պես, սկսեց կոչվել Ռուբեն Անդրեաս Փափազյան։ Նույն վարժարանի շրջանավարտ Տիգրան Սավալանյանը, ինքնուրույն ու թարգմանական գործերով պարբերականներում հանդես գալուն պես, սկսեց կոչվել Հայրապետ Տիգրան Սավալանյան և այլն։

Այս վերափոխմանը, հասկանալի է, պետք է ենթարկվեր նաև Ստեփան Ոսկանյանի անունը։ Ասացինք արդեն, որ նա ֆրանսերեն լեզվի օգնական ուսուցչի պաշտոն ուներ Մեսրոպյան վարժարանում, ինքնուրույն ու թարգմանական բնույթի մեկից ավելի գործեր էր հրատարակել «Արշալույս Արարատյանում», իր ուսուցչի՝ Ռուբեն Անդրեաս Փափազյանի հետ մեկտեղ հանդիսանում էր 1841 թ. հիմնադրված «Սյունյաց ընկերության» գործունյա ու եռանդուն անդամներից մեկը։ Զմյուռնիայի հայոց հասարակական կյանքում այսպիսի

¹ Տե՛ս «Արշալույս Արարատյան», 1850, № 378։

տեղ ու անուն ունեցող երիտասարդը, բնականաբար, չէր կարող բացառություն կազմել ընդունված կարգից, և 1844 թ. սկսած հանրությունը պետք է ներկայանար նոր՝ Հայկ Ստեփան Ոսկանյան ձևով։ Այս ճշգրտումը մեզ համար ամենևին էլ երկրորդական չէ այն պատճառով, որ սկսած 1844 թ. փետրվարից մինչև 1846 թ. սկզբները, այսինքն՝ մինչև Ոսկանյանի Փարիզ մեկնելը, «Արշալույս Արարատյանը» ավելի կամ պակաս հաջորդականությամբ հրատարակում է վերջինիս ինքնուրույն և թարգմանական՝ չափածո և արձակ ստեղծագործությունները, որոնք, սակայն, ստորագրված են «Հ. Ս. Ոսկանյան» կամ «Հ. Ս. Ո.», կամ «Հ. Ս.» ձևով, ուստի և վրիպել են ուսումնասիրողների աչքից։ Թվենք այդ գործերը, որոնք տպագրվել են «Արշալույս Արարատյանի» համարներում։ «Վասն զեռնոց, որ զմի՝ և եթ օր կեան առ Հիբանեա» (1844, ապրիլ, № 187), թարգմանություն է, կատարված ֆրանսերենից. նկարագրում է Հընդկաստանի Հիբանիս (նաև՝ Հիֆասիս) գետի ափին բնակվող մի քանի սողուններ, որոնք ընդամենը մեկ օրվա կյանք ունեն։ «Աղբատ գինեղէն» (1844, հուլիս, № 199), ֆրանսերենից կատարված գրաբար չափածո թարգմանություն է։ Պատկերված է գինեղջյած աղբատը, որը տուն է վերադառնում բարձր տրամադրությամբ, «Կինն իւր թագուհի, որդիքն են իշխան» կարծելով։ «Տրամաբանութիւն բարոյական», հրատարակվել է անմիջապես հաջորդ համարում (1844, հուլիս, № 200)։ Պատմվածք է, թարգմանված գրաբար, ֆրանսերենից։ Գեղածիծաղ դաշտում նստած են Օկերն ու նրա Արմանդուս որդին, և հայրը որդուն բացատրում է այն օգտակար դերը, որ կատարում են թռչունները, ծառերը, անգամ առաջին հայացքից անպետք թվացող փշերն ու մացառնիքը։ «Ծպուռն ու մրջին» (1844, օգոստոս, № 204), Լաֆոնտենի հանրահայտ առակն է, ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ։ «Գորտն, որ ջանա զել զեզն մեծութեամբ» (1845, փետրվար, № 226), ի տարբերություն նախորդների, որոնք ունեին «Հ. Ս. Ոսկանյան» նշումը, ունի «Հ. Ս. Ո.» ստորագրությունը։ Իարձյալ Լաֆոնտենին է, թարգմանված ֆրանսերենից գրաբար, չափածո։ «Առ քաջն Վարդան (երգ)» (1845, փետրվար, № 227), Ոսկանյանի առաջին արձակ գեղարվեստական ստեղծագործությունը։ Իր բնույթով արձակ բանաստեղծություն է, գրաբար լեզվով և նկարագրում է Վարդանի՝ մահանալով անմահանալը։ «Բարեկեցիկ աւուրք» (նույն համարում), գրաբար ընդարձակ պոեմ, Ոսկանյանի գրչին պատկանող առաջին ինքնուրույն պոեմը։ Գործող անձինք՝ «Սոյլն» ու «Ժիրն» են, որոնք վիճում են ուսման դերի ու նշանակության մասին, յուրաքանչյուրն առաջ քաշելով իր անվան համապատասխանող տեսակետ։ Ի վերջո, հասկանալի է, հաղթանակում է «Ժիրը»։ «Գարուն» (1845, ապրիլ, № 230)։ Գարունն ու գարնան գալուստը ներբողող գրաբար ինքնուրույն բանաստեղծություն է, որն առաջին և միակ անգամ ունի «Հ. Ս.» ստորագրությունը։ «Բարոյական» (1845, ապրիլ, № 231), պատմվածք է՝ ֆրանսերենից կատարված գրաբար թարգմանությամբ և նկարագրում է բարի ոգու (Բերկրության) և չար ոգու (Վշտի) պայքարը։ «Կաղնի և եղեգն» (նույն համարում), Լաֆոնտենի հանրահայտ առակն է, ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ և ունի «Հ. Ս. Ո.» ստորագրությունը։ Եվ վերջապես՝ «Ամառն» (1845, հունիս, № 235), դարձյալ ունի «Հ. Ս. Ո.» ստորագրությունը և նախորդի հետևությամբ ներբողում է ամռան գալուստը։

Ստեփան Ոսկանյանի գրչին պատկանող տասնմեկ անուն ինքնուրույն և թարգմանական այս գործերին եթե ավելացնենք նաև 1843—1844 թթ. ընթացքում «Արշալույս Արարատյանում» հրատարակված վեց անուն գործերը ևս², ապա կունենանք պատկառելի քանակ կազմող հետաքրքրական գրական մի ժառանգություն, որը միանգամայն նոր ձևով է ներկայացնում հեղինակին և լրացնում ու ամբողջացնում է նրա գրական-ստեղծագործական գիմանկարը³։ Այս փաստի հավաստումը մեզ համար ամենևին էլ երկրորդական չէ, որովհետև Ոսկանյանի կյանքի և հատկապես գրական գործունեության ամենասկզբնական, այսինքն՝ մինչև 1846 թ. Փարիզ մեկնելու շրջանի մասին պարզապես ոչինչ հայտնի չի եղել։ Ուսումնասիրողները, անդրադառնալով այդ ժամանակահատվածին, ասել-կրկնել են միևնույն մեկ-երկու նախադասություններ, այն է՝ «Ստեփան Ոսկան ծնած է 1825-ին Զմյուռնիո մեջ և հաճախած է Մեսրոպյան վարժարան, ուր շատ օգտված է Անդրեաս Փափազյանի դասերեն։ Դպրոցին շրջանը ավարտել են ետք, 1846-ին կմեկնի Նվրոպա, Փարիզ կհասնի...»⁴։ Կամ. «Ստ. Ոսկանյանը ծնվել է 1825 թվականին Զմյուռնիայում, չքավոր արհեստավորի ընտանիքում։ Մանուկ հասակում գրկվելով հորից, հարուստ ազգականների նյութական օժանդակությամբ ավարտեց Մեսրոպյան վարժարանը և ապա ուսուցչի պաշտոն ստանձնեց հենց նույն վարժարանում։ 1846 թվականին Ոսկանյանը մեկնում է Փարիզ»⁵։ Կամ վերջապես. «Ստեփան Ոսկանյանը (1825—1901) մեկն է հայ այն մտավորականներից, որոնց հասարակական-քաղաքական հայացքները կազմավորվեցին 1848 թվականի ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի մթնոլորտում... Ավարտելով վարժարանը (ի՛մա. Մեսրոպյանը—Ս. Շ.) նա մի պահ դասեր էր տալիս իր հարուստ ազգականներին, Առաքել և Նուպար Նուպարյաններին, ապա շուտով մեկնում է Փարիզ»⁶ և այլն, և այլն։ Մինչդեռ, ինչպես ականհայտ է, Ոսկանյանի այս շրջանում գրած ու թարգմանած ստեղծագործությունները կարևոր և լրացուցիչ տղակ են հեղինակի գրական-հասարակական կյանքում։

Վերոհիշյալ գործերի կապակցությամբ ուշադրության արժանի է նաև հետևյալ հանգամանքը։ Կատարելով առաջին նախափորձերը, Ոսկանյանը գրում կամ թարգմանում էր աշխարհաբար (արևմտահայերեն) լեզվով, ի դեպ, մեծ գիտակցություն ու հմտություն հանդես բերելով արևմտահայերենի բնագավառում։ Սակայն հետագայում, երբ նա արդեն ուսուցիչ էր Մեսրոպյան վարժարանում և քիչ թե շատ դիրք ու հեղինակություն ունեւր Զմյուռնիայի հայկական համայնքին առնչվող գործերում, պատկերը մեկից փոխվում է։ Իշխարհաբարի փոխարեն, ինչպես տեսանք, իրար են հաջորդում ինքնուրույն ու թարգմանական մի ամբողջ շարք գործեր, կատարված գրաբարով։

Ոսկանյանը միայն ստորագրված գործեր չէր, որ հրատարակում էր «Արշալույս Արարատյանում»։ Քննությունը ցույց է տալիս, որ շաբաթաթերթում առ-

² Տե՛ս մեր հոդվածը, ՀՍՍՀ ԴԱ «Լրարեր», 1969, 1969, № 4։

³ Այստեղ և հետագայում գիտակցաբար կանգ չենք առնում հիշյալ գործերի գրական վերլուծության և այս կարգի այլ հարցերի վրա, որովհետև մեր նպատակը հեղինակային պատկանելության հավաստման հանգամանքն է։

⁴ Վ. Զարդարյան, Հիշատակարան..., Պոլիս, 1910, էջ 145։

⁵ «Հայ նոր գրականության պատմություն», հատ. Ա, Երևան, 1962, էջ 96։

⁶ Ա. Զ. Հովհաննիսյան, Նախադասներ և նրա ժամանակը, հատ. Ա, Երևան, 1955, էջ 301, 305։

կա են ոչ քիչ թվով ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական ստեղծագործություններ, որոնք պատկանում են Ոսկանյանի գրչին, բայց որոնք ինչ-ինչ պատճառներով ստորագրված չեն եղել և, հետևաբար, առ այսօր մնացել են չբացահայտված: Դրանցից առաջինի (հրատարակվել է «Արշալույս Արարատյանի» 1844 թ. մայիսի № 185-ում և նվիրված է գարնանն ու Սյունյաց ընկերությանը) հեղինակային պատկանելությունը ապացուցվում է հետևյալ կերպ:

Վերոհիշյալ բանաստեղծությունից գեռ երեք ամիս առաջ Ոսկանյանը հրատարակել էր «Առ հայրենասէր ընկերութիւնն Սիւնեաց» վերնագիրը կրող իր գրաբար բանաստեղծությունը (ունի «Հ. Ս. Ոսկանեան» ստորագրությունը), ուր հեղինակը դրվատում է այդ ընկերության ազգօգուտ գործունեությունը, ցանկանում նրան երկարակեցություն ու բարգավաճում, խնդրում է Զմյուռնիայի հայազգի մեծատուններին՝ ձեռքից եկածը շխնայել ընկերության համար և այլն: Ըստ որում, հեղինակի գրաբարն ունի մի խիստ հատկանշական առանձնահատկություն, որը հնարավորություն է տալիս «բռնել» նրա գրչի տակից դուրս եկած գործերը: Աշխատելով որքան կարելի է հավատարիմ մնալ դասական գրաբարի սկզբունքներին, Ոսկանյանը բառերում հանդիպող «օ» ձայնավորը վերածում է «աւ» երկբարբառի: Գրում է, օրինակ, «Հաւտ գառանց»՝ «Հօտ գառանց»-ի փոխարեն, «արաւտ»՝ «արօտի» փոխարեն, «աւր»՝ «օր»-ի փոխարեն, «առաւաւտեան»՝ «առաւօտեան»-ի փոխարեն և այլն: Այսպիսի օրինաչափություններով է գրված վերոհիշյալ «Առ հայրենասէր ընկերութիւնն Սիւնեաց» բանաստեղծությունը, և նույն օրինաչափություններն էլ նրկատում ենք քննության ենթակա անստորագիր գրաբար բանաստեղծության մեջ, ուր հանդիպում ենք «աւդ», «դափնեաւք», «ամենազաւր» բառերին («օդ», «դափնեօք», «ամենազօր» բառերի փոխարեն): Ապա. շնայած այն բանին, որ բանաստեղծությունն ունի «Գարուն» վերնագիրը, և սկզբնական մեկ-երկու քառյակները գուլերգում են տարվա այդ եղանակը, բայց ընդհանուր առմամբ ջերմ ներքող է Սյունյաց ընկերության հասցեին, ըստ որում հեղինակը բազմիցս բառացիորեն գործածում է այն ոճերն ու արտահայտությունները, որոնք կիրառել էր իր նախորդ բանաստեղծության մեջ: Եվ վերջապես՝ տպագրելով այս բանաստեղծությունը, «Արշալույս Արարատյանը» տալիս է հետևյալ ծանոթադրությունը. «Այս շաբթվան բանասիրականին մեջ գրված ոտանավորը Ուրբ Մեսրոպյան վարժարանին առաջադեմ աշակերտներուն մէկուն գրածն է, որն որ Սյունյաց ընկերությանը նվիրեց...»: Քիչ հետո կտեսնենք, որ օրաթերթը այսպիսի բնութագրականով մեծարում էր միայն Ստեփան Ոսկանյանին:

Դարձյալ Ոսկանյանի հետ է կապվում և դարձյալ անստորագիր է «Արշալույս Արարատյանի» 1845 թ. № 217-ում (30 նոյեմբերի) տպագրված «Տերն հողմավար» բանաստեղծության թարգմանությունը: Նախ՝ վերջինս թարգմանված է «ի գաղղիականե». իսկ մենք տեսանք, որ ֆրանսերենից կատարված թարգմանություններով օրաթերթում (գոնե մինչև 1846 թ. սկիզբը) հանդես էր գալիս Ստեփան Ոսկանյանը: Ապա. թարգմանությունը կատարված է գրաբար, և դրաբարն ունի ոճական այն առանձնահատկությունը, որ հատկանշական է Ոսկանյանին և որի մասին խոսվեց վերևում: Եվ եթե սրան էլ ավելացնենք, որ բանաստեղծության մոայլ, հոռետես ոգին շատ ընդհանրություններ ունի նրա թարգմանչի նույնքան մոայլ, անհեռանկար ու անապագա վիճակի հետ, որի համար էլ, անկասկած, գրավել է նրա ուշադրությունը, ապա դժվար չի

լինի մակաբերել, որ հիշված «Տերև հողմավար» բանաստեղծության թարգմանությունը նույնպես կատարել է Ոսկանյանը:

Սկսած այս ժամանակվանից, այսինքն՝ 1846 թ. սկզբներից, Ոսկանյանի կյանքում արմատական փոփոխություն է տեղի ունենում: Նույն թվականի հավանորեն փետրվարին նա մեկնում է Փարիզ և, նախապես ունենալով Տատյանների հովանավորությունն ու պաշտպանությունը, ընդունվում է համբավավոր «Սենտ-Քարպ» վարժարանը, որպես ճշգրիտ գիտությունների ճյուղին հետևող: Միաժամանակ նա նամակագրական կապեր էր պահպանում Զմյուռնիայի իր ծանոթ-բարեկամների հետ և, հատկապես, «Արշալույս Արարատյանի» խմբագիր-հրատարակիչ Ղուկաս Պալտազարյանի հետ, որի տված հանձնարարականով էլ, ի դեպ, ներկայացել էր «Սենտ-Քարպի» տնօրեն-վերակացու Ալեքսանդր Լաբրուստին: Եվ «Արշալույս Արարատյանի» 1847 թ. № 298-ում տպագրված անստորագիր հոդվածը՝ «Հարգի հրատարակիչ» խորագրով, նվիրված է հենց «Սենտ-Քարպ» վարժարանին ու նրա ներքին դրվածքի բնութագրմանը, մի հանգամանք, որն արդեն խոսում է հոգուտ Ոսկանյանի: Հետո՝ հոդվածը գրված է Փարիզից, և գրողը մի քանի անգամ անդրադառնալով իրեն, շեշտում է, որ ինքը «հայազգի է», «Քարպիստներու հայազգին է» և այլն: Ապա՝ հոդվածն ունի մեզ համար կարևոր հետևյալ ծանոթագրությունը. «Այս նամակը մեզի գրողը Իզմիրի Ս. Մեսրոպյան դպրոցին վաղեմի առաջադեմ աշակերտներեն մեկն է», որով բացահայտվում է, որ «Արշալույս Արարատյանի» Փարիզում գտնվող հայազգի թղթակիցը իրենց համաքաղաքացին էր և Մեսրոպյան վարժարանի նախկին առաջադեմ շրջանավարտներից: Հայտնի է, որ «Սենտ-Քարպում» հայազգի երիտասարդներից սովորել է նաև Տատյանների կրտսեր որդին՝ Հարություն Գարեգին Տատյանը, սակայն վերջինս 1845 թ. կեսերից արդեն մեկնել էր Փարիզից, հետևաբար վարժարանում Ստեփան Ոսկանյանից բացի ուրիշ հայազգիներ չկային: Այս բոլորից հետո եզրակացությունը կարող է լինել մեկը. որ վերոհիշյալ «Հարգի հրատարակիչ» խորագիրը կրող հոդվածի հեղինակը նույնպես Ստեփան Ոսկանյանն է:

Ստեփան Ոսկանյանին պատկանող ինքնուրույն և թարգմանական բնույթի քսան անուն գործեր, որոնք անուշադրությամբ մնացել էին մեր պարբերականների էջերում, նշանակալից նյութեր են մեր իրականության այդ նշանավոր դեմքի գործունեությունը բացահայտելու համար: